Այս տեղերում նա բնակեցրեց ժողովուրդ, որ նա կոչեց «Խոակոն», իսկ Աղուանից երկրում շինեց Դրունք Շաքքան[1], Քամիբարան[2] եւ Դրունք Դուստանիայ[3]. բայց տեղի բնակիչք կը պնդեն, թէ շինել է Դուդան բ. Ասադ բ. Խուզայմա: Շինեց եւս Դուրղուքիյա[4] (քաղաքը), որ ունէր 12 դուռ

տալիս 20 հեծեալի կող առ կող միասին վերայով անցնել: Խոսախրի հեռաւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ Դերբենդի մասին. «Բաբ-էլ Աբուաբ քաղաք է ծովի ափին, որ իւր մէջ նաւահանդիստ ունի. ծովի երկու կողմից ամրարտակներ են շինուած, որոնց շնորհիւ նաւերի համար մուտքը նեղ եւ ծուռ կը հանդիսանայ: Մուտքը շղթայած է, այնպէս որ առանց թոյլատուութեան ոչ մի նաւ չի կարող ներս մտնել կամ դուրս գնալ... Քաղաքը ունի քարէ պարիսպ, որ մինչեւ լեռները կը տարածւի. աս է միակ լեռնային ճանապարհն անհաւատների աշխարհից դէպի մուսլիմների երկրները, որովհետեւ (միւս) անցքերը եւ ճանապարհները դժարին եւ անանց են: Պարսպի մի մասը քթի ձեւով կ'իջնի ծովը, որպէս զի նաւերը այս պարիսպներին շատ մօտ չդան: Լեռան վերայ (որի ստորեւ Բաբ-էլ Աբուաբ կը հանդչի) պէտք է 70ից աւելի լեզուներ խօսին, այնպէս որ մի ցեղ միւսին չի հասկանայ, լեզուների պէսպէսութեան պատճառով:

1 شكن որ է ուտէական Շաքի քաղաքը: Աւելի ճիշդ է Ibn Haukal-ի شكى եւ Jakut-ի شقى գրութիւնն:

2 قميران գրութիւնն այլայլած է. Andreas կ'ուզէ قميزان որ է կեղծ խորենացու Քանքիծան, մի ի 10 գաւառաց Աղուանից, զատ ի Հայոց. հմմտ. Plin VI. 13: Flumen... Cambyses in Caucasis ortus montibus. Dio Cassius 37, III: Πρὸς τὸν Καμβύσης πορευόμενος. Այժմ Կամբէջի, Աղնախից հարաւ:

3 Երկիր Ծովդէացւոց կամ Ծաւդէք:

4 الدزوقية = Դուրձուկ. տես Brosset, Histoire de la Géorgie I, 25—26. Նոյնն է Durdukka կամ Zurzukka քաղաքն Մաննացոց երկրում, որ 716 թ. գրաւեց Սարգոն: Քաղաքս եւ կը յիշէ Ptolomaeus: Ζουρζούα.